Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

613.81
Ն-84

Մ. ԾՈՅԻԿԵԱՆ

384

ՏԱՐԱԾՈՒԱԾ ԱԽՏԸ

ԲԱԳՈՒ
Տպարան „Արար"
1904

14 MAY 2013

20 JUL 2010

Ա. Մ. ԾՈՅԻԿԵԱՆ

1101
610
112-ԾՈ
384
613.81
8-84
Ա.Ն.

ՏԱՐԱԾՈՒԱԾ ԱԽՏԸ

1003
10214

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Պետական Գրադարան
7/XI-1922
Именная Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1904

2872

Дозволено Цензурою. Тифлисъ, 9 Апрѣля 1904 г

ՏԱՐԱԾՐԻԱԾ ԱԽՏԸ

Ա.

Ցաւալի է, որ ոչ անհատական և ոչ էլ ընկերական ակնյայտնի վնասները խրատ չեն լինում, որ մարդիկ թողնեն ոգելից խմիչքներ գործածելու սովորութիւնը։

Արբեցողութիւնը, որ անասնացնում է մարդուն, ոտնակոխ անելով ամեն արժանապատուութիւն, սարսափելի կերպով տարածուած մի ախտ դառել։ Մի ախտ, որ բացի բարոյական անկումներից, և ֆիզիկական մեծ կոտորածներ է առաջացնում։ Մենք դեռ չենք խօսում նիւթական կործանումների մասին, որ չափ ու սահման չունի։

Ալկոլի* պատճառած աղէտները, ուրիշ մի կարգ սոսկալի աղէտներից աւելի մեծ է նորանով, որ թողած հետքերը խորն ու տևական։ Ախտավարակութեան հետևանքները անցնելով սերնդից սերունդ, հետզհետէ աւելի և աւելի ուժեղ թափով են արտայայտում։

* Խմիչքների ոգին, թունը։

Իրաւ է թէ, խմելու սովորութիւնը շատ հին ժամանակներից է սկսած ու տարածուած մարդոց մէջ։ Բայց նախկին ժամանակների մարդիկ շատ չէին գործածում ոգելից խմիչքներ։ Դորա գլխաւոր պատճառը, պէտք է ասել, այն էր որ, ոգելից խմիչքներ ամեն տեղ և ամեն ժամանակ առատօրէն չէր ճարւում։ Նամանաւանդ որ, շատ թանկ էին արժում։ Հին դարերում շատ չկային ոգելից խմիչքներ պատրաստող գործարաններ։ Հողագործութիւնը աւելի սննդատու և օգտաւէտ բերքեր էր արտադրում հացահատիկների հետ միասին։

Իսկ այժմ, գժբաղդաբար, այնպէս չէ։ Ամենքին յայտնի է թէ աշխարհի ամեն կողմում, որքան հոդեր դրաւուած են ալիոլ արտադրող բերքերի մշակութեամբ։ Յայտնի է և այն, թէ որքան շատ կան ոգելից խմիչքներ պատրաստող գործարաններ և վաճառող մեծ ու փոքր խանութներ, նամանաւանդ՝ գինետներ։

Այս օր, ամեն երկրի լուսաւորուած կենտրոններում թէ յետ ընկած խաւար անկիւններում, ամեն կարգի, հասակի և սեռի պատկանող մարդիկ, ինչպէս մի տեսակ հոգեկան հիւանդ, շարունակ ձգտում են բաւականութիւն փնտռել ալիոլի մէջ։ Իսկ ալիոլի պատճառած բաւականութիւնը, էապէս այն բա-

նումն է միայն կայանում, որ թունաւորում է նորանց կեանքը ու չարաչար սպանում։

Այնպիսի մարդիկ կան, որոնց համար խմելը ուղղակի կենսական պահանջ է դառել։ Եւ նորա այնպէս են կարծում, որ եթէ մի օր չի խմեն՝ պիտի հիւանդանան ու մեռնին։

Մարդիկ էլ կան, որոնց համար, ճշմարիտ է, թէ և կենսական պահանջ չէ խմելը, և ոչ էլ սովորութիւն, բայց և այնպէս խմում են։ Նորա խմում են, ինչպէս որ իրանք են բացատրում, մի կարգ պատճառներից դրդուած։ Պատճառներ, որոնց համարում են ոչ միայն արդարացի, այլ մինչև անգամ յարգելի։

Ցոյց տանք այդ պատճառներից մի երկուսը իբրև օրինակ։

Բ.

Մէկը խմում է ընդհանրապէս՝ երբ ունենում է մի ծանր վիշտ։ Նա խմում է այն խաբուսիկ յոյսով գրաւուած, որ իւր վիշտը պիտի մոռանայ։ Նա իր որտին սիրելի մի անձ է կորցրել, և որին դեռ նոր տարել, յանձնել է հողին։ Նա վերադառնում է գերեզմանատնից։ Բարեկամներն ու ազգականները նորան շրջապատում են։

Նստում են սեղան։ Սկսում են ուտել, բայց ուտելուց աւելի խմել։ Խմում է և սգաւորը։ Բայց նա քանի խմում է, այնքան իր վիշտը բորբոքւում է, փոխանակ գտնելու այն մխիթարութիւնը կամ մոռացումը՝ որին սպասում էր։

Առաջ, որ նա դեռ ինքնիրան չի կորցրած, քաղաքավարական պատշաճութիւններից զրկուած, մի կերպ իրան պահում էր, հիմա այդ էլ չի կարողանում։ Անզուսպ կերպով պոռթկում է։ Եւ այդ ահագին տղամարդը, ինչպէս մի փոքրիկ երեխայ, սկսում է բարձր ձայնով լաց լինել։ Մտէք այժմ դուք նորա հիւրերի դրութեան մէջ, թէ որքեօք խեղճերը սրբան անհանգիստ են լինում, նեղւում։

Վերջապէս, հոգեկան սաստիկ տանջանքներից բոլորովին ուժասպառ եղած, մի տեսակ անզգայ վիճակի մէջ է ընկնում։ Իսկ երբ սթափւում է այդ անզգայ վիճակից, նա արդէն տեսնում է, որ խմելով ոչ միայն իր վիշտը չէ մոռացել, հապա այդ վշտի վրայ աւելացել է և մի ծանր, ճնշող, յուսահատական լքում։

Ցաւալի դրութիւն չէ։

Գ.

Մի ուրիշը խմում է հաճոյքի, ուրախութեան համար։ Նա խնջոյք է սարքում իր տանը որ և է ուրախ պարագայի առիթով։ Ծանօթ ու ընկեր մարդիկ, իմանալով այդ, շտապում են շնորհ բերել նորա տանը։

Եւ արդէն բոլորը տրամադիր ու պատրաստ ուրախ ժամանակ անցկացնելու, սկսում են խմել։

Ի՞նչ խօսք, որ գոնէ նորանցից շատերը ճիգ են գործ դնում, որպէս զի միմիանցից յետ չի մնան խմելու մէջ, իրար գերազանցեն։ Եւ ով որ ամենից աւելի խմելու յաղթանակն է տանում, նորա հասցէին տեղում են գովեստներ, ինչպէս փառքի ու պարծանքի արժանի մի հերոսի։

Երգերի ու պարերի հետ սկսում են առաջ գնալ և անմիտ սրաբանութիւնները, անհամ կատակները, զզուելի բանբասանքներն ու անտանելի անձնագովութիւնները։

Մի տեսակ ճշմարիտ երևոյթի տակ՝ բռնազբօսիկ զուարճութիւն ու կեղծ ուրախութիւն է տիրում ամենքի վերայ։

Մինչ այդ սակայն, այսպէս թէ այնպէս,

դեռ մի կերպ, կարգը պահպանուած է։

Բայց ահա, մէկ էլ տեսաք, նորանցից մէկը սկսեց խօսել մի ուղտի մասին։ Այդ ուղտը, իբրև թէ, ինք իր սեպհական աչքերով տեսել է, որ թեներ առած թռել է օդին մէջ, ինչպէս մի թռչուն։

Լսողները, բնականաբար, եթէ դեռ իրանք իրանց չեն կորցրած բոլորովին, չեն կամենում հաւատալ ուղտի թռչելու անբնական ու այլանդակ պատմութեանը։

Նա պնդում է միշտ իր ասածի վրայ, և ստիպում որ անպատճառ հաւատան։ Մուսներն էլ, իրանց կարգին, շարունակ հերքում են։ Վիճաբանութիւնը գնալով թունդ, կրքոտ ու սուր բնաւորութիւն է ստանում։ Եւ վերջապէս փակւում է տեսարանը գիտէք ինչով.—կողմնակի ծանր վիրաւորանքներով ու կռուով, եթէ ոչ սրով ու ատրճանակով։

Ահա մի ուրախ ժամանց . . . ։

Հիմա ուրիշ վարագոյր է բացւում։ Այս անգամ մենք բեմի վրայ տեսնում ենք մի կարգ զարդացած երիտասարդներ։ Այդ պարոնները մտադիր են խմել նորա համար, որպէս զի ո-

գևորուին, ջերմ զգացմունքներով լցուին, և հասարակական գործունէութեան գեղեցիկ ծրագիրներ յղանան։

Նորա հիմա ուրախ զուարթ շրջապատում են ընտիր ոգելից խմիչքներով ու աղանդերներով բեռնաւորուած սեղանը։ Եւ իսկոյն, դիմում են իրանց մտադրութեանը. այն է խմելու։

Բաժակներն արդէն շառաչում են, և շուտ շուտ դատարկւում խիստ գեղեցիկ ու գաղափարական «կենաց» ներով։

Եւ ահա, շատ ժամանակ չ'անցած, այդ սիրուն երաշներով օրօրուն երիտասարդների գլուխները սկսում են պտոյտ գալ, աչքերը աւելի փայլիլ, և երեսներն ու բթերը կարմրիլ։ Արդէն բարձր խորհուրդներով ներշնչուած են։ Այժմ նոցա բերաններում լեզուներն աւելի շուտ շուտ են դառնում, ճիշտ ինչպէս դառնում են ջրաղացների անիւները։ Նոցա եռանդոտ, կրակոտ խօսակցութեան առարկաներն են կազմում բացառապէս հասարակական և գաղափարական խնդիրներ։ Միայն թէ, այնքան էլ շատ միմիանց չեն լսում, որքան խօսում են։ Այդ սաստիկ ոգևոր, բայց և խառնի խուռն խօսակցութիւններից իսկոյն երևում է, որ նորանցից ամեն մէկը պատրաստ է ամեն տեսակ զոհողութեան։ Իրենց կեանքը նոյն իսկ,

այլևս կոպէկի չափ արժէք չ՝ունի իրանց աչքում այդ միջոցին։ Եւ նոքա սիրայօժար ցան. կանում են նուիրուել՝ վերացնելու համար հասարակական ամեն չարիք ու թշուառութիւն։

Այդ բոլոր հիանալի պատրաստակամութիւնները սակայն, ինչ օգուտ, որ մնում են միմիայն խօսքեր, զուր ոգևորութիւններ, և զգացումների ապարդիւն բռնկումներ։ Այդ բոլորը, ասում ենք, գինու ոգին հետ բարձրանում են նոցա գլուխները, և լցնում՝ գանկերը։ Դորանից առաջ է գալիս վաղացիկ, անբնական մի ջերմութիւն, որ եռացնում է նոցա ուղեղները, և հետզհետէ նորից սառեցնում։ Մի սառնութիւն, որ գնալով աւելի սաստկանում է մանաւանդ, քանի նոքա հեռանում են Բագոսեան սեղանից։ Իսկ այն՝ հասարակական գործունէութեան գեղեցիկ գաղափարները, որ նոր յղացել էին, չի կարողանալով մարսել, արդէն փոխել, դուրս են թափել բոլորը իրանց միջից . . . ։

Եւ հիմա՝ ոչ միայն յոգնած, դադրած են գործելուց՝ նոցա մարքերն ու զգացմունքները, հապա նա և մարմինները՝ որոնք կարօտում են հանգստի։

Մօտեցէք, վերցրէք նոցա անկողինների վարագոյրները, և դուք կը տեսնէք, որ նոքա իրանց ձեռներն ու ոտները արձակ տարածած, սոսկալի կերպով խռմփում են։

Տխուր կատակերգութիւն . . . ։

Ե.

Թողնենք այժմ տներում արբեցող պատուաւոր մարդկանց ընկերութիւնները, և մի քիչ էլ մտնենք գինետուն.

Ի՞նչ կը տեսնէք դուք այնտեղ։ — Ծխից ու արտաշնչումներից գոյացած մի թանձր, վատառողջ մթնոլորտ, որի տակ, խումբ խումբ մարդիկ նստած, անյագաբար խմում են.

Դորանց մէջ ամեն հասակի ներկայացուցիչներ կան։

Գայթակղելը, որ այնքան մեծ յանցանք չէ, որքան գայթակղեցնելը, դորա տխուր արդիւնքները շեշտակի աչքի են ընկնում այդ մարդկանց մէջ։ Դուք տեսնում էք դեռատի երիտասարդներ, նոյն իսկ պատանիներ, որոնք կուրօրէն մեծ մարդոց յիմարութեան օրինակին հետևելով՝ խմում են, ծխում ու անբարոյականանում։

Այդ մեայլ մթնոլորտի տակ, զանազան ռնգային ու կոկորդալիր ձայներ են հնչում, փողոցային խաղեր լսւում, և այլանդակ ծիծաղներ են բարձրանում։ Օտարներ, որոնք խմիչքի

ազգեցութեան տակ, խոկոյն և եմ միմիանց հետ բարեկամանում են։ Նոքա, միմիանց մինչև անգամ իրանց սրտի թագուն խորհուրդներն ու գաղտնիքներն են յայտնում։ Արբած մարդը գաղտնիք չի կարող պահել։ Մտերիմ բարեկամներ, որոնք, միմիանց դէմ, ամենաչնչին մի պատճառից, խոկոյն լարւում, թշնամանում են, խուլ ատելութեամբ լցւում, և մատնութիւններ անում։ Դուք կը տեսնէք խնայասէր, անվնաս, և գառնուկի նման հեզ մարդիկ, որոնք արբենալով գառել են վատնող, չար, և կրքերի մէջ այնպէս անզուսպ, ինչպէս մի գազան։ Նոքա, ծայրահեղ դէպքում գուցէ սնիր էլ գործեն։ Դուք կըտեսնէք և ուժեղ նկարագրի, երկաթեայ կամքի տէր մարդիկ, որոնք արբելով գառել են ուղղակի մի կամազուրկ ըստրուկ, մի խեղճ, ողորմելի անասուն։

Եւ գողգողացող ձեռներով բաժակները միշտ լցւում են։ Կարմիր, դեղին ու սպիտակ թոյները հոսում են կոկորդներից վար՝ ստամոքսները։ Թոյներ, որ զրգռում, բորբոքում են ստամոքսը, խանգարելով նորա կենսարար գործունէութիւնը։ Թոյներ որ այրում, մրկում, փճացնում են մարդկայեն կազմուածքի ներքին յոյժ փափուկ գործարանները։ Թոյներ, որոնց փոխարժէքը գուցէ փրկելու էր այդ օրը խմող ի ընտանիքը՝ քաղցածութիւնից, երեխաների ուսման վարձն անվճար մնալու հոգսից, և դեռ ուրիշ շատ տեսակ ցաւերից։

Եւ ահաւասիկ, ներկաներից մէկի չափն արդէն լցուած մինչև անգամ անց կացած, գուրս է գալիս գինետնից, օրօրուելով ու տատանուելով։

Հետևենք նորան։ Նա, փողոցում, անցորդների ծայրին ու ծանակին առարկայ է դառել. Մի րոպէ, նոյն խոկ, էլ անկարող է լինում պահել իրա հաւասարակշռութիւնը։ Եւ ընկնում է փողոցի մէջ տեղը, փռւում՝ ինչպէս մի մեռեալ, և անարգ մի դրութեան մէջ անզգայանում։ Անցորդներից ոմանք, մօտենալով այդ անզգայացած խղճալի մսակոյտին, որի անունն է մարդ, թքում են նորա վրայ։ Այդ դեռ բաւական չէ. նոքա, իրանց ոտներով հրմշտկում ու խփում էլ են, և ապա թողնում, գնում իրանց գործին, արգահատանքից աւելի զզուանքի զգացմունքով լցուած.

Բայց ահա, ահա կառք է գալիս այն կողմից։ Նա չի տեսնում, չի զգում։ Ցաւալին այն է որ գիշեր է, փողոցը մութ, և մօտը, այդ րոպէին, դէթ իր վրայ թքող ու ոտներովը խփող մէկն էլ չիկայ. Կառապանը գետնի վրայ տարածուած մարդուն չի նշմարում։ Սրարշաւ քշում,

անցնում է։ Ձիանց ոտներն ու կառքի անիւները կոխոտում, ջարդում են նորա մարմինը։ Թշուառը։ Մինչ դեռ տանը նորա աւելի ևս թշուառ կինն ու զաւակունքը, հազար ու մէկ կասկածներով ու մտատանջութիւններով՝ իրան են սպառում, որ մի կտոր հաց բերէ, ուտեն ու պառկին։

Աւասիկ և մի ամուրի երիտասարդ, որ շնորհիւ ալկոլի, նորա մէջ ամեն ժամանակից աւելի սկսած է եռալ անասնական կիրքը։ Եւ հիմա նա՝ բուռն ու անյագ ցանկութիւնով լցուած, դուրս է գալիս գինետնից։

Տեսէք, տեսէք, թէ նա ինչպէս թունաւոր ընդգրկումների հեշտագին երևակայութեանց մէջ խորասուզուած, առանց նոյն իսկ իր կարմրած աչքերը շուրջը դարձնելու, քայլերն ուղղեց դէպի վատահամբաւ վայրերը։ Նա արդէն հասաւ, մտաւ՝ երիտասարդութիւն, արիւն ու կեանք ծծող հրապուրիչ դժոխքից ներս։ Դռները փակուեցին, և նա, իր ամբողջ հոգումն ու մարմնովը անձնատուր եղաւ անառակութեան։ Զարհուրանք։ Նա չի մտածեց, չի կարողացաւ մտածել, թէ այդ անզգոյշ դրութեան մէջ կարող է վարակուել վատ հիւանդութիւններով։ Ի՞նչպէս կարող էր մտածել, քանի որ գլխումը փոխանակ խելքի՝ գինու մոլեգին, գի-

ւական չար ոգին էր տիրած։ Եւ նա, թելադրուած այդ չար ոգուց, շարժուեց, գնաց ընկաւ այն անդունդի մէջ, որ լիքն է սոսկալի ցաւերով ու ախտերով։

Դեռ շատ տեսակ վատ և աւելի վատթար հետևանքների օրինակներ կարելի է տալ, որոնք անխուսափելի կերպով միշտ առաջ են գալիս խմելուց։ Բայց աւելորդ են։ Որովհետև այդ բոլորին շատ լաւ ծանօթ են այն բոլոր մարդիկ որոնք քարշ են գալիս արբեցողութեան պատուհասներով լիքը աշխարհում։

Զ.

Բոլոր գիտական հետազօտութիւնները, և ամեն օր իրական կեանքում պատահած դէպքերը հաստատում են, որ ալկոլ գործածելու սովորութիւնը միշտ էլ եղել է մնասակար։ Բայց մարդիկ, գիտենալով հանդերձ, դարձեալ չեն կամենում հեռանալ այդ վտանգաւոր սովորութիւնից։

Ինչու։ — Որովհետև, բացի ներելի կարծուած պատճառներից, այնպիսի մի ընդհանուր համոզմունք էլ կայ գոյացած, որ իբրև թէ ոգելից խմիչքները զանազան օգտակար յատկութիւններ են կրում իրանց մէջ։ Որ իբրև թէ

խմիչքները լաւ ախորժակ ու սնունդ են տալիս, մարսողութիւնն են դիւրացնում, արիւն շատացնում, մարմինը տաքացնում, և այլն։

Բայց, արդեօք, ճիշտ է այդ համոզմունքը։

Ահա թէ ինչ է ասում այդ մասին գոկտօր Վ. Արծրունին. «խմիչքը մարդուն չի տաքացնում, խմիչքը մեր ոյժերը չի աւելացնում, խմիչքը մեզ սնունդ չի տալիս։ մարդիկ խաբում են իրանք իրանց։»

Միւնոյն բանն է ասում Լիէժցի գիտնական պ. Բիէնֆէ որ խօսել էր Պարիզի միջազգային հակալիօլական կօնգրէսում։

«Ալկօլը մարսողական է.—Ոչ, նորա մարսողութիւնից առաջ է գալիս ստամոքսային մկանունքների վաղանցիկ և աղէտալի մի գրգռում, որովհետև ալկօլը ստամոքսը գրգռելուց յետոյ, անզգայացնում է, որովհետև արիւնը դէպի մորթը բաշում, և ստամոքսային հիւթի ներգործութիւնը արգելում է։ Ալկօլը ախորժատու է. — Ոչ, բայց ստամոքսային մի գրգռութիւն է պատճառում, որը առաջ է բերում մի զգայութիւն, քաղցածութեան պատրանք։ Ալկօլը սնունդ է.—Ոչ, նա չի համապատասխանում այս սահմանումին, և արտադրած ջերմութիւնը չի ծառայում ոչ իրական ջերմութեան և ոչ մկանային գործունէութեան։ Ալկօլը տաքացնում

է.—Ոչ, միայն դէպի մորթը մի արեան խուժում է տեղի ունենում, և ընդհանուր սառչում։»

Միւնոյն ճշմարտութիւնները շարունակ կրկնում են մեզ բոլոր խելացի, գիտուն և առողջաբան մարդիկ, երկար տարիների փորձառութիւններից վճռական եզրակացութեան եկած։

Ուրեմն, իսկապէս, բոլոր խմող մարդիկ, իրանք իրանց խաբում են, և զարմանալի մի ինքնաբաւականութեամբ քայքայում իրանց առողջութիւնը՝ որ գին չ'ունի։

Խմելուց առաջ են գալիս շատ տեսակ թշուառութիւններ։ 1° բարոյական. խելքի մթի բթացում, անընդունակութիւն, և հակում դէպի չարութիւն ու անբարոյականութիւն։ 2° Նիւթական. աւելորդ ծախսեր, չռայլութիւն, վատնում, աղքատութիւն։ 3° ֆիզիկական. բնական ոյժերի թուլացում, անկարողութիւն, ախորժակի նուազում, անքնութիւն, սաստիկ ու երկարատև ցաւեր, յուսահատութիւն, և կանխահաս մահ։

Խմելուց նոյն իսկ անմիջական մահ կարող է առաջ գալ։ Այդ մասին բաւական է յիշել, իբրև անվիճելի փաստ, որ համաձայն կատարուած ամենաստոյգ վիճակագրութիւնների, միայն Ռուսաստանում, տարեկան 35,000 հոգի ոգելից խմիչքներից թունաւորուելով անմի-

ջապէս մեռնում են։

Նշանաւոր առողջաբան Սըր Բէնժամէն Ուարդ Բիչարդսըն, կազմախօսական և բնախօսական օրէնքով ապացուցանում է թէ. «Մարդս մինչև 105 տարի ապրելու յարմար կազմուածք ունի։ Մարդոց դոնէ հարիւրին 75-ը այս չափ տարի պիտի կարողանային ապրել, եթէ լինէին ժուժկալ, և լաւ տնտեսէին իրանց ֆիզիկական, իմացական ու բարոյական կարողութիւնները։»

Մենք տեսնում ենք իսկապէս, որ այն բոլոր ցեղերը, որոնց մէջ կրօնական ու բարոյական օրէնքով արգելուած է ոգելից խմիչքներ գործածելը, նորա ընդհանրապէս շատ առողջ ու երկար են ապրում։

Անժուժկալութիւնը մի տեսակ անյագ որդ է, որ երբ մարդու մէջ բոյն է դնում, հետզհետէ լափում ու սպառում է կեանքը։

Կարող է պատահել, որ խմելու սովորութեան ազդեցութիւնը սկիզբներում, և կամ մինչև մի որոշ ժամանակ նկատելի չլինի։ Բայց վստահ եղէք, որ անպատճառ մի օր, առաջ է գալու նորա վտանգաւոր ազդեցութեան բացարձակ նշանները, ինչքան էլ քիչ լինի նոյն իսկ գործածուած խմիչքի քանակութիւնը։

Գուցէ յիշում է, որ անցեալ՝ 1903 թուի ապրիլի 15-ին Գերմանիոյ Բրեմէն քաղաքում կայացաւ մի հակակոլական համաշխարհային կոնգրէս, որի մասին գրուած էր նա և «Մշակ» լրագրում։ Այդ կոնգրէսում Սուսդհոլմից եկած փիլիսոփայութեան դոկտոր Պ. Բերգմանը, գիտական անհերքելի փաստերի վրայ հիմնուելով յայտնեց թէ. «Ալկոլի ամենաչնչին քանակն անգամ թունաւոր է, և խորտակիչ ազդեցութիւն է գործում մարդու առողջութեան վրայ»։ Իսկ Լօզանից եկած պրոֆէսոր Պ. Ֆորէլը՝ որ նոյնպէս խօսել էր այդ կոնգրէսում, ասաց թէ.« ոգելից խմիչքի մի փոքրիկ կաթիլն իսկ թոյն է պարունակում»։

Յայտնի է թէ մարդոց կեանքը վտանգների դէմ ապահովագրող ընկերութիւնները, իրանց ժուժկալ անդամներին 10 կամ 20% միշտ զիջողութիւն են անում։ Այդ ապահովագրական ընկերութիւնների մահացուցակները ցոյց են տալիս, որ ժուժկալ անդամների մահաթիւը անժուժկալներից 30% պակաս է լինում։

Գիտնականօրէն ապացուցուած է թէ՝ խմող մարդիկ ընդհանրապէս իրանց յատուկ մի կարգ հիւանդութիւններ են ունենում։ Դորանցից գլխաւորները կազմում են ստամոքսի, լեարդի, երիկամունքի, թոքի, սրտի և ուղեղի հիւանդութիւնները։ Ալկոլը՝ նախ այդ գործարանների միջից է անցնում և ամենից ասելի նորանց

փչացնում։ Ապացուցուած և այն, որ խմող հիւանդը շուտ չի լաւանալուց յետոյ, դրութիւնը հետզհետէ աւելի էլ վատանում է, բոլորովին անյուսալի դառնում։ Յայտնի է թէ ալկոլից յետոյ՝ թոքախտը նոյնպէս ինչ՝ զարհուրելի աւերներ է գործում ամեն տեղ։ Ինչից է առաջ գալիս թոքախտը։—Բացի ժառանգականութիւնը՝ ի հարկէ և շատ պատճառներից։ Արդ՝ բժիշկները հաստատում են, որ ստացական թոքախտի գլխաւոր պատճառներից մէկը կազմում է ալկոլամոլութիւնը։ Որովհետև, ասում են նորա, ալկոլն ու թոքախտը իրար հետ շատ սերտ յարաբերութիւն ունին մարդու մէջ։ Այդ մասին մի շատ հետաքրքիր դասախօսութիւն էր կարդացել Բրեմէնի հակալկոլական կոնգրէսում՝ բժշկապետ Պ. Լեգրէն, որ նախագահն է Ֆրանսիական Հակալկոլական Միութեան։ Պ. Լեգրէն այդ երևոյթը մանրամասնօրէն քննելուց յետոյ յայտնեց, որ իսկապէս՝ «Ալկոլը նախապատրաստում է անհատին թոքախտի ճիրանները ձգելու համար»։ Յետոյ այն որ՝ «ալկոլը կրկնակի է ազդում թոքախտի զարգացման, մանաւանդ մանկական հասակում, և խանգարում, մինչև անգամ անկարելի դարձնում նորա բուժումը»։ Եւ որ վարջապէս, Պ. Բժշկապետի կարծիքով՝ «այս

երևոյթը աւելի յաճախ է կրկնւում, քան բնածին թոքախտը, որի զոյութիւնը դեռ ևս վիճելի է»։

Բայց արդեօք խմելու մոլութեան չարիքներին միմիայն խմողն է ենթարկւում։ —Ո՛չ, խմողը բացի իրանից թշուառացնում ու դառնացնում է և իւր սիրելիների կեանքը։ Աւելի սասափելի են մանաւանդ ժառանգական անողոք դժբախտութիւնները։ Թէ խմելու մոլութեան գերի եղողից բարոյապէս թէ ֆիզիկապէս ինչ՝ հիւանդոտ, այլանդակուած ու այլասերուած սերունդներ են առաջ գալիս, այդ ցոյց են տալիս բանտերում, յիմարանոցներում ու հիւանդանոցներում կազմուած վիճակագրութիւնները։

Դոկտոր Մ. Իլթիւձեան, որ անդամ է մի քանի առողջապահական ընկերութիւնների, հետևեալ կերպով է ներկայացնում դինեմոլից առաջացած սերունդների այլասերման ազգաբանական պատկերը։ «Առաջին սերունդ.—ոգելից ըմպելեաց սովորութիւն, չափազանցութիւն, բարոյական վատթարացում։ Երկրորդ սերունդ.—սովորական արբեցողութիւն. շեշտեալ, խելայեղ յայտնութիւնք. ընդհանուր և առաջադիմական անդամայուծութիւն։ Երրորդ սերունդ.—սեամաղձութիւն, մելամաղձութիւն, ձգտում ցոփութեան, ոճրագործութեան, կազմական տարկանոնութիւն, ֆիզիկական խրճալի կազ-

մուած, յաճախ հիւանդութիւն և կանխահասմահ։ Չորրորդ սերունդ.—Անկարողութիւն, շլամտութիւն, ապշութիւն, այլանդակութիւն, հրէշութիւն, բացարձակ ամլութիւն, և մեռեալ մարդածնութիւն»

Անգլիացի հռչակաւոր յիմարաբոյժ, դոկտոր Ջոն Սքուլինկ, մի վիճակագրութիւն է հրատարակած, որ ապացուցանում է թէ, խելագարների 35%-ը գինեմոլութեան զոհեր են։ Մինչ դեռ զանազան տեսակ վշտերից և դժբախտ արկածներից ամենաշատը 15%-ից աւելի խելագարուողներ չեն եղած։

Իսկ Բօն քաղաքի բժշկական համալսարանի դասատու, յիմարաբոյժ Ռիշման բժիշկը՝ յայտնի՝ իր 80 ամեայ փորձառութեամբ, մի գինեմոլ կնոջ սերունդների այլասերման վիճակագրութիւնն է տալիս։ Այդ կնոջ անունն է Իւդժիւռթ, որից առաջացած է 834 սերունդ։ Դորանցից 709-ը առհասարակ մուրթ, կասկածելի և վատ թար կեանք են վարել, հետևաբար եղել են բանտերի յաճախորդներ, ժամանակաւոր թէ մշտական։ Հաստատուած է մասնաւորապէս՝ 106 ի ապօրինի ծնունդ լինելը, 142-ի ապաքատախնամ ընկերութիւններից նպաստ ստանալը, 72-ի զանազան ոճիրներ կատարելը, 181-ի պոռնկանալը և 7-ի մարդասպանութիւն գործելը։ 75 տարուայ ընթացքում, Իւդժիւռթ ընտանիքի այլասերուած անդամներին սանձահարելու, պատժելու և պահելու համար Գերմանիան ծախսել է 3 միլիոն ռուբլի։

Ա.

Ահա այս կարգի ամեն տեսակ թշուառութիւնների ու աղէտների առաջն առնելու համար է, որ Եւրոպայում թէ Ամերիկայում հիմք են դրել վաղուց, և սկսելն գործել՝ բազմաթիւ հակալկոլական ընկերութիւններ։ Այդ ընկերութիւնների ունեցած անդամների թիւը, այսօր, հասնում են մի քանի տասնեակ միլիոնների։

Միևնոյն նպատակով գործող ընկերութիւններ կան և ռուսաստանում։ Ռուսաստանում յայտնի է և 1894 թուին Ալէքսանդր III-ի հիմնած օրէնքը, այն է՝ մասնաւորների ձեռքից վերցնելով ալկոլի վաճառումը, մենավաճառութեան ենթարկել։ Այդ մենավաճառութեան օրէնքին և միանում են մի կարգ նախատեսուած այլ միջոցներ, որոնց բոլորի նպատակը ուրիշ բան չպէտք է լինի, բայց եթէ միայն՝ ժողովրդի դէպի արբեցողութիւնը ունեցած ձգտումը արգելել ռուսաստանում։ Այդ

օրէնքը արդէն գործ է դրուում ռուսաստանի շատ քաղաքներում ու գիւղերում։

Հոլանդիայում նոյնպէս, ալկոհոլականութեան չափազանցութեան դէմ գործադրուող օրէնքը լաւ արդիւնքներ է տուած։ Այսինքն՝ գինեատների թիւը զբեթէ կէս առ կէս պակասել է։ Պակասել է նաև ալկոհոլ սպառման քանակութիւնը 8½ %։

Ալկոհոլի սպառման քանակութեան 6/7 % պակասելը նկատուած է և Ֆինլանդիայում, վերջին 35 տարուայ ընթացքում։

Շվեդիայի շատ կողմերում այժմ մեծ յաջողութիւն է ունենում «Գոթենբուրգեան» անուն յայտնի գործունէութեան եղանակը։ Այդ գործունէութեան եղանակը կայանում է նորանում, որ քաղաքային վարչութիւնները իրանց ձեռքն առնելով ոգելից խմիչքների վաճառատները յանձնել են՝ ժողովրդի առողջութիւնը թանկ գնահատող և շահամոլութեան չի ձգտող ընկերութիւնների։ Գործելու այդ եղանակը ընդունուած է և ուրիշ երկրներում։

Անգլիայի շատ քաղաքներում, 70 տարուց իվեր հաստատուած կան բազմաթիւ ժուժկալական ճաշարաններ ու սրճարաններ, որոնց մէջ կատարելապէս բացակայում է ոգելից խմիչքների մատակարարութիւնը։ Լոնդոնում մի-

այն այդ կարգի 78 ճաշարաններ կան, որոնք օրական 80,000 հոգու ճաշն տալիս։

Ամերիկայում և Անգլիայում, նոյն իսկ, կէս դարուց իվեր գոյութիւն ունին նահանգներ, որոնց մէջ քաղաքական իշխանութեանց կողմից, ժողովրդի ցանկութեամբ, օրինաւորապէս արգիլուած է ոգելից խմիչքների վաճառումը։ Եւ իրօք, գիտուած է, թէ այդ նահանգներում յանցագործութիւններ շատ սակաւեն պատահում, իսկ սնիրներ՝ գրեթէ երբէք։

Այդ մտքով քայլ առնելու մի փորձ երևաց վերջերս և Ֆրանսիայում։ Իրողութիւնը այն է, որ Պարիզի բժշկական ակադեմիայի հակալկոհոլական յանձնաժողովի մէկ նիստում, գիտնական պ. Լապօրտ ներկայացրեց մի տեղեկագիր։ Չի մոռանանք ասել, որ պ. Լապօրտ այդ յանձնաժողովի ամենագործուն անդամներից մին է։ Նա իւր տեղեկագրի մէջ շեշտում էր այն ահաւոր աւերները, որ գործում է ալկոհոլը Ֆրանսիայում, չի նայած որ այդ երկրում գործող հազարաւոր հակալկոհոլական ընկերութիւններ կան։ Նա, ի վերջոյ, խնդրում էր ակադեմիայից՝ լուրջ առաջարկութիւն անել կառավարութեանը՝ վերցնելու համար ալկոհոլի վաճառումը բոլոր խանութներում, և թոյլ տալ պահել միայն դեղատներում։ Իսկ առանց բժշկի հրամանի մի կա-

թիլ նոյն իսկ չի տալ ոչ ոքի, ինչպէս մի մնասակար և թունաւոր դեղ։ Պ. Լապորտի տեղեկագիրը ուշադրութեան առնուած է ակադեմիայի կողմից, և գուցէ նպաստաւոր վճիռ կը տրուի.

Գալով այժմ այն հարցին, թէ արդեօք ալկոլը կարելի է իբրև դեղ գործածել հիւանդութիւնների ժամանակ և օգտուել, այդ գաղափարն էլ արդէն հերքուած է։ Եւ դորա զօրեղ, փայլուն ապացոյցը տուել է այն տիպար ժուժկալական հիւանդանոցը, որ 30 տարուց ի վեր գոյութիւն ունի լօնդօնում։ Այդ ժուժկալական հիւանդանոցի բժիշկները միմիայն ալկոլ չի պարունակող դեղերով են դարմանում ընդունուած ամեն տեսակ հիւանդներին ու վիրաւորներին։ Եւ բացարձակ կերպով նկատուած է, որ այդ հիւանդանոցում, հիւանդների մահաթիւը 7% նուազ եղած է, համեմատելով այլ կարգի հիւանդանոցներում պատահած մահաթիւերին։ Ենորհիւ այդ փաստի, ժուժկալական հիւանդանոցները շատանալով, այս օր արդէն աշխի ընկնող մի թիւ են կազմում,

Բ.

Այսպէս ուրեմն, ինչպէս տեսնում ենք,

քաղաքակրթուած երկրներում շատ լայն կերպով ըմբռնուած ու տարածուած է հակալկոլականութեան գաղափարը։ Պէտք է ասել և այն, թէ այդ գաղափարին հետևող միլիոնաւոր անհատներից բոլորը, անշուշտ, խմիչք չսիրող մարդիկ ու կանայք չեն եղել։ Ընդհակառակը, այդ հակալկոլականների մէջ բաւական մեծ տոկոս են կազմում այնպիսիները, որոնց համար խմելը անհրաժեշտ մի սովորութիւն, պահանջ էր դառած։ Բայց նորա, վերջապէս, տեսնելով իրանց առաջ բացուած չարիքի ահաւոր անդունդը՝ թողելն, ոմանք հետզհետէ, և ոմանք միանգամից՝ շնորհիւ իրանց կամքի ոյժի։ Պէտք է ասել և այն, թէ ընդհանրապէս քաղաքակրթուած վայրերում ոչ ծիծաղելի է թւում և ոչ էլ արհամարհելի երբ օրինակի համար մէկը վեր է կենում մի որ և է ժողովատեղում, և սկսում է խօսել ալկոլի մնասների մասին։

Շատ սովորական մի երևոյթ է այդ վայրերում հակալկոլականութեան մարդասէր գաղափարի քարոզումը, ինչ ձևի և ինչ պարագայի տակ էլ լինի։ Եւ այդ քարոզումները ապարդիւն չեն անցնում բոլորովին։ Լսողները մտածում են, դատում, բնականաբար ուղիղ գտնում, և վերջապէս հետևում են։ Այդպիսի

դէպքեր լինում են նոյն իսկ՝ ալկոլի ազդեցութեան կատարելապէս ենթակայ եղող մարդկանց շրջաններում։

Ի՞նչ է պատահում սակայն առհասարակ մեզանում, երբ դուք ուրիշ էք ունենում մի քանի մարդկանց մէջ այդ մասին խօսել։ Դուք կամ ծաղրւում էք և կամ նախատւում։ Եւ ապա լսում էք այս տեսակ խօսքեր.

— Էհ, բան չ'ունեմ։ Երեխայական միտք է այդ, յիմարութիւն ուղղակի։ Մինթէ կարելի է առանց գինու ապրել աշխարհում։ Հիանալի բան է խմելը։ Կեցցե՞ն բոլոր խմիչքները՝ որ մեզ տալիս են ամեն հաճոյք ու կենդանութիւն։

— Մինթէ ինձ արբեցողի տեղ էք դրել, գոչում է մի ուրիշը ձեր երեսին՝ վշտացած ու վիրաւորուած, որ այդ տեսակ խրատներ էք կարդում գլխիս։ Խնդրեմ, դուք գնացէք՝ թունդ խմողներին զգուշացրէք։ Իսկ ես, շատ լաւ ճանաչում եմ իմ չափը, և իմ վնասն ու օգուտը։

Ճշմարիտ է, որ պատահում են երբեմն մարդիկ էլ, որոնք խմելու վնասակարութեանը համոզուած են, և նոյն իսկ շատ էլ համակիր չի խմելու գաղափարին։ Բայց որովհետև

նոցա մէջ կամքը մեծ դեր չէ կատարում.

— Չեմ կարող, չեմ կարող խմելու սովորութիւնս թողնել, ասում են նոքա, և շարունակում թոյնի գործածութիւնը։

Մանաւանդ մի կարգ խելացի, իմաստուն համարուած մարդիկ կան, որոնք կամ ընտանիքի հայրեր են և կամ հասարակութեան մէջ առաջնորդողի ու դաստիարակողի դեր կատարողներ։ Սոքա էլ մի շատ զարմանալի և ապշեցնող պատասխան են տալիս ձեր խօսքերին։ Նոքա ասում են.

— Մեր խմելը ոչինչ։ Նոր սերունդը միայն պէտք է որ զգուշանայ խմելուց։ Այո, այդ անհրաժեշտ, որպէսզի նոքա ժուժկալութեամբ մտնեն կեանքի ասպարէզ, չի փճանան, և լինեն հոգով ու մարմնով առողջ, հետևաբար հասարակութեան օգտակար անդամներ։

Բայց արդեօք դուք, ընտանիքի հայրեր ու մայրեր, և դաստիարակողի դեր կատարող պարոններ, մինթէ երբէք չէք մտածում ձեր արած խօսքերի, վարմունքի և նոցա հետևանքների մասին։ Ասացէք խնդրեմ, թէ ինչ է սովորելու ձեզանից նոր աճող, զարգացող սերունդը, երբ տեսնում է ամեն օր, որ դուք սեղան նստելիս, մի քանի բաժակ օղի, գինի կամ գարեջուր անպայման խմում էք։

Մենք խրատում ենք մեր փոքրիկներին, զգուշացնում նորանց, թէ սուտ խոսելը մեծ յանցաք է և ամեն չարիքների մայր։ Բայց նոցա առաջ մենք ինքներս սկսում ենք սուտ խօսել, կեղծել։

— Որդի, ասում ենք մենք մեր զաւակին կամ սանին, իմացիր որ խմելը շատ վատ բան է։ Խմող մարդը անպատիւ, անբարոյական, աղքատ ու ամեն կերպով թշուառ կը լինի ի վերջոյ։ Զգուշացիր սիրելիս, զգուշացիր։ Քո օգտի համար եմ ասում միայն, զգուշացիր։

Ասում ենք, զգուշացնում ենք, և ինքներս նոցա առաջ խմում ենք փառաւորապէս։

Այս ամենքս էլ ամեն ջանք թափում ենք զգուշացնելու մեր փոքրիկներին ամեն տեսակ վատ վարմունքներից։ Բայց ինքներս չենք տալիս ըզգուշանալու անձնական օրինակը։

Եւ բնականաբար մեր այդ խրատները ոչ մի արդիւնք չեն ունենում։

Մենք մոռանում ենք։ Ոչ՝, չենք մոռանում, այլ գիտենալով անտես ենք առնում այն ամենատարրական ճշմարտութիւնը թէ, ամենամեծ բարոյական խրատը, որ կարող է ազդել մեզ լսողների վրայ, դա անձնական բարի օրինակն է։

Զգուշանանք ուրեմն վատ օրինակ լինելուց։ Խնայենք նոր սերնդին։

Ժ.

Խմելու վնասների մասին խօսելուց յետոյ, այժմ մի քանի խօսք էլ ասենք այդ տարածուած ախտի առաջն առնելու միջոցների մասին։

Դա մի նիւթ է, որի մասին շատ գրուած ու շատ էլ խօսուած է։ Բայց թէ արդեօք մինչև այժմ, գէթ մեզանում, գործադրուած այդ միջոցները մի զգալի արդիւնք տուել են։

Այդ հարցին, դժբաղդաբար, այնքան էլ մի մխիթարական պատասխան չենք կարող տալ։ Բայց և այնպէս, չարիքն այնքան մեծ է ու տարածուած, որ մասնաւոր յաջողութիւններն էլ պէտք է քաջալերել։ Որովհետև մարդիկ, մոլութիւններից առհասարակ դժուարութեամբ են ձեռք վերցնում, մանաւանդ երբ տգէտ են լինում։

Պէտք է ամեն միջոց գործ դնել։ Արիւնարբու թշնամին, բազմագլխեան հրէշը, միշտ մեր աչքի առաջն է. այս տեղ, այն տեղ, ամեն տեղ։ Նորա գոյութիւնը մի անգամից ջնջել, անկարելի է։ Բայց կարելի է նորա ոյժը ջլատել, հարուածել՝ ամեն հնարաւոր բարոյական զէնքերով։ Այդ չարիքի դէմ կռուելը սրբազան պարտականութիւն է ամեն մի կըր-

թուած և խելօք մարդու համար։

Միայն թէ պատահած անյաջող դէպքերից չպիտի յուսահատուել։ Դուք միշտ նկատի ունեցէք, որ կարողէք ոչ միայն ծաղրուել ու նախատուել, այլ նոյն իսկ թշնամանուել ու հալածուել։

Մոլութիւնների ու նախապաշարմունքների դէմ կռուողը միշտ այդպիսի անախորժ դէպքերի կարող է պատահել։ Անյողդողդ պիտի լինել ու անվհատ գործել։ Դորանումն է կայանում գործողի մեծ արժանիքը։

Ուրեմն՝ համարձակ պիտի խօսել ամեն տեղ, ընտանիքներում, գինետներում և թէ հանդիսական տեղերում, ամեն տեսակ խմիչքների վնասակարութեան մասին։

Թող համոզուի խմողը, որ այնքան էլ դժուար չէ սովորութիւնից ձեռք քաշելը։ Բաւական է միայն՝ հաստատուն կամք ունենալ։

Ամեն մեծ շարիք՝ փոքրից է սկսում։ Խմելու մոլութիւնը, և կեանքի թունաւորումը, մէկ բաժակ խմիչքից է առաջանում։ Ուստի, զգուշանքով ու սոսկումով պէտք է հեռու փախչել այդ մէկ բաժակից։

Փոքրիկների վրայ մասնաւոր ուշադրութիւն պիտի դարձնել, և հսկել, որպէս զի նոքա տանից դուրս վատ ազդեցութիւնների չենթար-

կուին։ Ուսուցիչները ծնողներից աւելի կարող են ազդել մատաղ մտքերի վրայ՝ իրանց օգտակար դասախօսութիւններով։ Երբ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը մոլութիւններից զգուշանում է, կատարեալ հասակի ու ծերութեան երջանկութիւնը ապահովուած է լինում։

Հարկ ենք համարում մասնաւորապէս և բանաւոր դասակարգի կառավարիչների ուշադրութիւնը հրաւիրել այս խնդրի վրայ։ Նոքա պէտք է զգուշացնեն գործաւորներին, որպէս զի արիւն քրտինքով ձեռք բերուած կոպէկները խմիչքի չի տան, այլ՝ յատկացնեն իրանց ընտանեկան կարիքներին։ Խմիչքի տրուած փողերը պահելով՝ սև օրուայ համար մի ապաւէն կունենան։ Օրական խնայուած 20 կոպէկից՝ տասը տարուան ընթացքում տոկոսներով գոյանում է 1000 ռուբլի։ Նիւթական ապահովութիւն և անձի առողջութիւն. այս չէ նորանց ցանկացածը։

Հրաւիրում ենք նոյնպէս գիւղական հասարակութիւնների վարիչների ուշադրութիւնը այս մասին։

Վերջացնելուց առաջ մեր խօսքերը, դիմում ենք ձեզ, յարգելի տիկիններ և օրիորդներ։ Դուք գիտէք արդեօք, թէ ձեր զգուշաց-

նող մի նայուածքն ու խելացի խօսքը, ինչ հմայող ազդեցութիւն կարող է առաջ բերել տղամարդկանց վրայ։ Մի մոռանաք։ Այդ պահանջում է նոյն իսկ ձեր սեպհական շահը, եթէ դուք կամենում էք ապրել անդորը ու երջանիկ ընտանեկան կեանքով։

Երիտասարդ պարոններ, գիտէք արդեօք թէ ձեր եռանդուն և անձնուէր գործունէութիւնից ինչ հրաշքներ կարողեն առաջ գալ, և բարութեան ապրիւրներ բղխել։

Փորձեցէք՝ և անշուշտ կը տեսնէք։ Մի լինէք անհոգ ու անտարբեր ձեր շուրջը տիրող տգիտութեան չարիքների ու թշուառութիւնների դէմ։ Անհոգութիւնը ու անտարբերութիւնը մանաւանդ երիտասարդ հասակում նշանակում է անկենդանութիւն, մահ։

Շնչում էք, ապրում էք. ցոյց տուէք ուրեմն կեանք, և գործունէութիւն։

Ձեր գոյութիւնը ապացուցէք։

Ձեր գոյութիւնը արդարացրէք։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/II 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0267121

2872

ԳԻՆՆԷ Յ ԿՈՊ.

Վիճ՝ Торговая ул., Ацоту Баручьянъ.